Azg Ազգ

22 ՅՈՒԼԻՍ 2008 ԵՐԵՔՇԱԲԹԻ 139 (4033)

Հայ-թուրքական դիվանագիտական շփումները երբեմ չեն դադարել, ժնեյան հանդիպումն էլ իրականություն է

Նախագահի դառնալուց 100 օր անց. «Իհարկե լինում են օրեր, որ հոգնում եմ, բայց ես ընդհանրապես հոգնած չեմ»

ԱՐԱՓԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բարեփոխումներ, կադրային վերադասավորումներ

Հարկային, մաքսային վարչարարության եւ ճանապարհային ոստիկանության բարեփոխումների առնչությամբ Նախագահը հատոգված է, որ կատարվածը ծանր եւ մեծ աշխատանքի սկիզբն է: «Սկսել ենք այն ոլորտներից, որոնք չափազանց էական ու կարեւոր են մեր ժողովրդի համար եւ որոնք իմ նախընտրական ծրագրի առաջնայնություններից էին», երեկ իր պաշտոնավարության 100-րդ օրվա առթիվ կայացած մամլո ասուլիսում ասաց ՀՀ Նախագահը: Ըստ **Մերժ Սարգսյանի**, կարեւոր է, որ գոհ լինի ոչ միայն ինքը, այլեւ հասարակությունը: Կադրային նոր փոփոխությունների առումով Նախագահը գտնում է, որ դա միշտ էլ տրամաբանական է: «Վերադասավորումները ընդհանուր առմամբ համարում եմ չափարտված: Հիմնական նշանակումները կատարվել են, ես իմ պահանջները ձեւակերպել եմ պետական պաշտոնյաների հանդեպ եւ ովքեր կկատարեն այդ պահանջները, շարունակելու են աշխատել: Իսկ ովքեր ոչ՝ նրանց կփոխարինեն ուրիշները»:

«Համակարգում կան բազմաթիվ մարդիկ, ովքեր 100 տոկոսով կողմ են բարեփոխումներին, ովքեր պատրաստ են ազնվորեն աշխատել: Ես իսկակ գիտակցում էի, որ դժգոհողներին ավելանալու էին նոր դժգոհողներ, որոնց ձեռքում կենտրոնացված են լծակներ, ֆինանսներ եւ այլն: Բայց մյուս կողմից էլ վստահ եմ, որ մեծամասնությունը մեր կողմում է...», կոռուպցիայի ու հովանավորչության դեմ պայքարի առումով այսպիսին է Նախագահի մոտեցումը:

Տես էջ 2

Պետերբուրգյան հանդիպումը՝ բանակցությունների հիմք

ԲԱՔՈՒ, 21 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օգոստոսի սկզբին Մոսկվայում Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների միջեւ բանակցությունների համար հիմք կծառայի ղարաբաղյան հակամարտության կարգավորման այն աշխատանքը, որը երկու երկրների նախագահները հունիսին առաջարկել են Սանկտ Պետերբուրգում:

«Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների առաջիկա մոսկովյան բանակցությունները նոր աշխատանքի սկիզբն են նշանավորում, որը երկու երկրների նախագահներն առաջարկեցին Սանկտ Պետերբուրգի հանդիպմանը»,- «Trend News»-ին ասել է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն:

«Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններն ընթանալու են մադրիդյան առաջարկությունների հիման վրա»,- հավելել է Ֆասիեն:

ՀՈԳՈՒՏ ՍՈՍՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Արա Աբրահամյանն իր ներդրումներն ավելացնում է եւս 150 մլն դոլարով

Նախագահ Սերժ Սարգսյանի կոչին ի պատասխան մեծ թվով հայ գործարարներ հայտարարել են Հայաստանում մեծաքանակ նոր ներդրումներ կատարելու մասին: Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը**՝ արձագանքելով Սերժ Սարգսյանի կոչին, հայտարարել է մինչեւ 150 մլն դոլար ներդրում կատարելու պատրաստակամության մասին: Ա. Աբրահամյանի հղած նամակում մասնավորապես ասվում է. «Մեծարգո պարոն Նախագահ, ես ոգեւորված եմ աշխարհասփյուռ մեր հայրենակիցներին ուղղված ուղերձով: Կարծում եմ, ոգեւորված է սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ: Մենք գնահատում ենք Ձեր ջանքերը Հայաստանի առջեւ ծառացած խնդիրներն օր առաջ լուծված տեսնելու գործում: Ձեր պաշտոնավարման 100 օրվա դինամիկան հույս է ներշնչում, որ նաեւ մեր մասնակցությամբ մի օր կտեսնենք մեր երազած Հայաստանը՝ բարեկեցիկ, սոցիալական խնդիրներից ձերբազատված, մրցունակ տնտեսությամբ եւ երաշխավորված կայուն անվտանգությամբ: Այսօր եկել է ժամանակը, որ հայրենիքի շենացման գործում սփյուռքի ներգրավվածությունն ու դերն էապես բարձրանան: Ես եւս որոշել եմ արձագանքել Ձեր կոչին. առաջիկայում պատրաստվում եմ 150 միլիոն դոլար ներդնել Հայաստանում տնտեսական նոր նախաձեռնությունների իրականացման գործում: Անշուշտ, շարունակելու եմ նաեւ ուշադրության կենտրոնում պահել հայաստանյան ստեղծագործական միությունների, գիտական եւ այլ հասարակությունների իմ կողմից արդեն աջակցվող ծրագրերը:

Այսօր իսկապես ժամանակն է միանալու եւ միասին լուծելու մայր Հայաստանում առկա այն խնդիրները, որոնք մինչ օրս չի հաջողվել մեզ լուծել»:

Հայաստան կայցելի Եխխվ-ի նախագահը

ԵՐԵՎԱՆ, 21 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լուիս Մարիա դե Պույջը հուլիսի 22-25-ին պաշտոնական այցով կգտնվի Հայաստանում: Ըստ ԵԽ-ի տեղեկատվական գրասենյակի հաղորդագրության, այցի նպատակն է խորացնել Հայաստանի եւ Վեհաժողովի միջեւ համագործակցությունը եւ աջակցել ԵԽԽՎ-ի թիվ 1609 եւ 1620 բանաձեւերի կատարմանը:

Այցի ընթացքում ԵԽԽՎ նախագահը մասնիր է, մասնավորապես, գնահատել մարտի 1-2-ի հետընտրական իրադարձությունների հետաքննության վստահելիությունը, հրատարակել բարձրացնել այդ իրադարձությունների կարգավորվածությամբ կալանավորված անձանց հարցը: Հուլիսի սկզբին Ադրբեջան այցելած ԵԽԽՎ նախագահը Երեւանում կհանդիպի նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վերջին քաղաքական զարգացումները:

Հուլիսի 23-24-ին նախատեսված են Լուիս Մարիա դե Պույջի հանդիպումները ՀՀ նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, արտգործնախարարի, Մարդու իրավունքների պաշտպանի, մարտի 1-2-ի իրադարձությունները ուսումնասիրող Աժ ժամանակավոր հանձնաժողովի, Վեհաժողովում հայկական պատվիրակության, Աժ-ում քաղաքական կուսակցության եւ ընդդիմադիր «Ժառանգության» ներկայացուցիչների, ինչպես նաեւ ՀՀ առաջին նախագահի հետ:

Գլխավոր դատախազի տեղակալի օգնականը հեռացվել է աշխատանքից

ՀՀ քաղաքացի Շավարշ Ղարիբյանը հուլիսի 17-ին (2008 թվ.) ոստիկանության Կոտայքի բաժին հաղորդում է ներկայացրել, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական Մհեր Բաղդասարյանը տուրջ 15 ժամ իրեն գրկել է ազատությունից: Դեպքը տեղի է ունեցել 2008-ի հուլիսի 16-ի ժամը 18-ից մինչեւ հուլիսի 17-ի ժամը 19.00-ն: Մհեր Բաղդասարյանը ոմն Գրիշի հետ Կոտայքի մարզի Արզնի ձորի մեջ գտնվող ամառանոցում, շահադիտական նպատակով գրկել է ազատությունից Շավարշ Ղարիբյանին ու գնի սպառնալիքով սպիտել է ստորագրել սպասկան, իբր թե Մհեր Բաղդասարյանից ստացել է 135.000 ԱՄՆ դոլար, որից հետո թեթել են նրան ու Երեւան-Սեւան ավտոճանապարհին առեւանգելով Շ. Ղարիբյանին պատկանող «ԲՄՎ-523» մակնիշի 01UL082 պետհամարանիշով ավտոմեքենան, թողացել են: Դեպքի առթիվ նույն օրը Կոտայքի քննչական բաժանմունքում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի երեք տարբեր հոդվածների հատկանիշներով: Հուլիսի 19-ին ավտոմեքենան չթալանված վիճակում հայտնաբերվել է Աբովյան-Նոր Հաճըն ավտոճանապարհի եզրին:

Մհեր Բաղդասարյանը դատախազության հանձնարարությամբ աշխատում է 2002-ից, նախ՝ որպես հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության տեսուչ-օպերատոր, ապա ավագ տեսուչ, իսկ 2007-ի օգոստոսի 1-ին նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական: Գործող օրենսդրության համաձայն, հուլիսի 17-ին Մհեր Բաղդասարյանը հեռացվել է զբաղեցրած պաշտոնից: Նա, ինչպես վերոհիշյալ Գրիշը այժմ հետախուզման մեջ են:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Լեհաստանում ՀՀ քաղաքացի է սպանվել

ՁԱԲԺԵ, 21 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 19-ին Լեհաստանի Ձաբժե քաղաքում սպանվել է ՀՀ քաղաքացի, 1974 թվականին ծնված Վաչե Ղազինի Համբարձումյանը: Ինչպես հաղորդում է «Ազատություն»-ը, Համբարձումյանը մշտական բնակություն էր հաստատել Լեհաստանում, սակայն հաստատված էր այդ երկրում ՀՀ դեսպանատանը: Լեհական մամուլում սպանության վերաբերյալ շրջանառվում են տարբեր վարկածներ, բայց պաշտոնական որեւէ տեղեկատվություն չի հաղորդվում: Քննությունը իրականացնում է ոստիկանական հատուկ ենթակա խումբը:

Ազատ է արձակվել Գուրգեն Եղիազարյանը

Մարտի 1-ի գործով ձերբակալված ԱԱ նախկին փոխնախարար Գուրգեն Եղիազարյանը երեկ ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ ազատ է արձակվել: Նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինվել է չբացակայելու մասին պատարագությամբ:

«Բամո» հոլդինգի նախագահը նույնպես արձագանքել է Մերժ Սարգսյանի ուղերձին

ԵՐԵՎԱՆ, 21 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսական հայտնի «Բամո» հոլդինգի նախագահ **Մուրադ Մուրադյանը** եւս արձագանքել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ «Բազե» համահայկական երիտասարդական հավաքում աշխարհասփյուռ հայությանը դիմած ուղերձին: Ինչպես «Արմենպրես»-ին հաղորդեցին հոլդինգի մամուլի ծառայությունից՝ նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված նամակում Մուրադ Մուրադյանն իր հերթին կոչով դիմել է սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին՝ ավելի եռանդուն լինել երկիրը շենացնելու գործընթացում: Մուրադ Մուրադյանի նամակում ասված է.

«Ես պատրաստ եմ Հայաստանում կատարել 120 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում՝ հաղթահարելու գյուղում նոր նախաձեռնություններ կյանքի կոչելու համար: Համոզված եմ, որ ներդրումների ու գործարար նախաձեռնությունների ճանապարհով կարող ենք նպաստել պետության սոցիալական բեռի թեթեւացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ Հայաստանի տնտեսության առաջընթացին ու մրցունակության աճին»:

Ասֆալտապատում, ճանապարհ, արտաքին լուսավորություն, վթարային շենքերի ամրացում

Այս աշխատանքների մասին երեկ խոսվեց Երեւանի քաղաքապետարանում

Այս տարվա ընթացքում մինչեւ օգոստոս Երեւանում կասֆալտապատվի 330 հազար քմ ճանապարհ: Այս մասին երեկ Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետ **Ֆրունզ Բասենցյանը**: Նա նշեց, որ ասֆալտապատմանը զուգահեռ կատարվում են ճանապարհի աշխատանքներ: Անցած վեց ամիսների ընթացքում արդեն ճանապարհվել են 125 հազար գնամեջ փողոցների ճանապարհ: Այս տարի նաեւ Կլուսավորի 17 փողոց:

Ֆրունզ Բասենցյանը տեղեկացրեց, որ արդեն 4-րդ տարին Երեւանի քաղաքապետարանը կատարում է 3-րդ կարգի վթարայնության շենքերի ամրացման աշխատանքներ: Այս տարվա ծրագրով ամրացվում են 10 այդպիսի շենքեր, որոնցից մեկի ամրացման աշխատանքներն արդեն ավարտվել են: Ծրագիրն ամբողջությամբ ավարտված կլինի հոկտեմբերին: Բյուջեից այդ նպատակով հատկացվել է 700 մլն դրամ:

Այս տարի նախատեսված է նաեւ անցկացնել մոտ 11 հազար մետր ոռոգման ջրագիծ, որի համար տրամադրված գումարը կազմում է 350 մլն դրամ: Շինարարության եւ բարեկարգման վարչության պետը նաեւ հայտնեց, որ հեղեղումներից խուսափելու նպատակով Հրազդան գետի մոտ կառուցվել են 245 գնամետր հենապատեր:

«Ազգի» հարցերից առաջինն առնչվում էր փողոցների ասֆալտապատմանը զուգահեռ նաեւ մայթերի ասֆալտապատման եւ եզրաքարերի նորոգման հնարավոր իրականացմանը: Ֆրունզ Բասենցյանը պատասխանեց, որ նոր ծրագրում դա նախատեսվում է: Իսկ մյուս հարցին, թե ինչո՞ւ ջրային ավազաններում շատրվաններն ու ցայտաղբյուրները միացվում են ոչ թե շոգ կեսօրին, այլ երեկոյան, վարչության պետը ընդունեց դիտողությունը եւ խոստացավ, որ դրանք կմիացվեն նաեւ ցերեկային ժամերին:

Ա. Մ.

ԸՆԹԱՑԻԿ

1-ին էջից

Հայաստան-Թուրքիա... Սարգսյան-Ռոչարյան...

«Ազգ» հետաքրքրվեց, թե որքանով են հասարակությունում իրականությանը հայ-թուրքական գաղտնի բանակցությունների մասին թուրքական մամուլի հրապարակումները: «Ինչ վերաբերում է գաղտնի շփումներին կամ ընդհանրապես հայ-թուրքական շփումներին, արդեն այդ շփումները երբեք չեն դադարել: Մեսաթես պետական պաշտոնյաները, դիվանագետները շփվել են եւ ես որեւէ սենսացիա չեմ տեսնում, որ մենք եւս հանդիպել են հայ եւ թուրք դիվանագետներ»:

Հայկակն կողմը պատրաստ է սպասելու Անկարային ուղղված հրավերի պատասխանին, Սարգսյանը կարեւորեց ոչ թե ժամկետը, այլ հայկական եւ թուրքական հասարակություններում նշմարվող միտումները՝ ճնշակելու առկա խնդիրները: «Չնայած որոշ թուրք քաղաքական գործիչների եւ պաշտոնյաների հայտարարություններին, թե հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն Հայաստանին, ես այդպես չեմ կարծում: Բարելավումը փոխշահավետ կլինի»: Որքերս Ռոչարյանի հայտարարության վերաբերյալ, թե իր ղեկավարելու դեպքում Թուրքիայի նախագահը հրավեր չէր ստանա, եւ արդյոք կան հակասություններ իր եւ Ռոչարյանի միջեւ, Սերժ Սարգսյանը պատասխանեց. «Կարծում եմ, Ռոչարյանի հայտարարությունը որեւէ ճնշադասություն չի պարունակում, ուղղակի նախագահ Ռոչարյանն իր անհամաձայնությունն է հայտնել իմ կոնկրետ հայի նկատմամբ: Նախկինում էլ բոլոր հարցերում չէ, որ մենք միակարծիք ենք եղել եւ ես նախընտրել եմ իմ կարծիքը հայտնել ոչ հրապարակով: Ես հարգում եմ նրա՝ հրապարակով իր կարծիքը հայտնելու որոշումը: Ինչ վերաբերում է խոր հակասություններին, դա երկար տարիներ բազմաթիվ մարդիկ փորձել են հակասություններ, տարաձայնություններ գտնել իմ եւ Ռոչարյանի միջեւ: Ընդ որում, այդ մարդիկ եղել են ոչ միայն ընդդիմության ներկայացուցիչներ, այլեւ մարդիկ, որ գտնվել են իշխանության մեջ, բայց բավարարված չեն եղել իրենց դիրքով, միգուցե ոմանք ինձ համարել են իրենց հակառակորդ, մեսաթես փորձել են բաժանել, գժտեցնել մեզ: Դա նրանց չի հաջողվել: Հիմա էլ նույնն է տարուկակվում: Այդ մարդիկ ուղղակի չկարողացան հասկանալ, որ իրենց ջանքերը զուր են»:

«Պետության կառավարումը բիզնեսի կառավարում չէ, որտեղ հնարավոր է գործադիր տնօրենի նշանակում, իսկ սեփականության իրավունքը կարելի է պահել ու ղեկավարել», իր Ռոչարյանի կողմից երկիրը դեռեւս կառավարելու մասին հարցին այսպես արձագանքեց նախագահը, ավելացնելով, որ որոշումներ կայացնելիս խորհրդակցում է ինչպես Ռոչարյանի, այնպես էլ կոալիցիոն գործընկերների, մասնագետների հետ:

Ռուսաստան, Իրան, Վրաստան, ԱՄՆ...

«Մենք իրավունք չունենք մեր դաշնակիցներից, մեր բարեկամներից պահանջելու փոխցնել հարաբերությունները այն երկրների հետ, ում հետ մենք բարեկամական հարաբերությունների մեջ չենք», խոսելով Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների ֆոնին Հայաստանի դիրքորոշման մասին՝ նշեց Սարգսյանը, կարեւորելով, որ ռուս-ադրբեջանական հարաբերությունները չբարելավվեն հայ-ռուսական հարաբերությունների հաշվին: Ըստ Սարգսյանի, այս համատեքստում մենք բանակցություններ անողները երկու բան են մոռանում, նախ, որեւէ երկրի նախագահ չի կարող չճանաչել պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը այնպես, ինչպես չի կարող չճանաչել ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ընդ որում, պրոպագանդվող նույն այդ ձեւակերպումներն առաջին անգամ ռուս-ադրբեջանական փաստաթղթում տեղ են գտել դեռեւս 1997-ին:

Հայաստանի արտաքին քաղաքականության աշխուժացման, նաեւ Իրան-Իսրայել-ԱՄՆ համատեքստում միջնորդի դերով հանդես գալու առնչությամբ Սարգսյանը նախ հարցրեց: Եվս մեկ անգամ հայտարարեց, որ դրական է գնահատում դաշտախաղության եւ դաշտանների գործունեությունը՝ այն մարդկանց հանդեպ մեղմություն ցուցաբերելու առումով, որոնց հանցանքը մեծ չէ: «Բայց, մյուս կողմից էլ, մենք իրավունք չունենք մահերի արանքից նայելու այս իրադարձություններին եւ չտեսնելու այն մարդկանց, ովքեր ծանր հանցանք են գործել, ովքեր կազմակերպել են զանգվածային անկարգություններ, ջարդել, փերել, ձեռք են բարձրացրել ուրիշի սեփականության վրա: Եթե մենք չափից դուրս մեղմ լինենք, դրանով շատ վատ ծառայություն մատուցած կլինենք մեր հասարակությանն ու երկրին: Շատ մարդիկ ապագայում կգայթակղվեն այդպիսի արարքնը կարեւորեց ոչ թե ժամկետը, այլ հայկական եւ թուրքական հասարակություններում նշմարվող միտումները՝ ճնշակելու առկա խնդիրները: «Չնայած որոշ թուրք քաղաքական գործիչների եւ պաշտոնյաների հայտարարություններին, թե հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն Հայաստանին, ես այդպես չեմ կարծում: Բարելավումը փոխշահավետ կլինի»: Որքերս Ռոչարյանի հայտարարության վերաբերյալ, թե իր ղեկավարելու դեպքում Թուրքիայի նախագահը հրավեր չէր ստանա, եւ արդյոք կան հակասություններ իր եւ Ռոչարյանի միջեւ, Սերժ Սարգսյանը պատասխանեց. «Կարծում եմ, Ռոչարյանի հայտարարությունը որեւէ հնարավորություն չի պարունակում, ուղղակի նախագահ Ռոչարյանն իր անհամաձայնությունն է հայտնել իմ կոնկրետ հայի նկատմամբ: Նախկինում էլ բոլոր հարցերում չէ, որ մենք միակարծիք ենք եղել եւ ես նախընտրել եմ իմ կարծիքը հայտնել ոչ հրապարակով: Ես հարգում եմ նրա՝ հրապարակով իր կարծիքը հայտնելու որոշումը: Ինչ վերաբերում է խոր հակասություններին, շատ երկար տարիներ բազմաթիվ մարդիկ փորձել են հակասություններ, տարաձայնություններ գտնել իմ եւ Ռոչարյանի միջեւ: Ընդ որում, այդ մարդիկ եղել են ոչ միայն ընդդիմության ներկայացուցիչներ, այլեւ մարդիկ, որ գտնվել են իշխանության մեջ, բայց բավարարված չեն եղել իրենց դիրքով, միգուցե ոմանք ինձ համարել են իրենց հակառակորդ, մեսաթես փորձել են բաժանել, գժտեցնել մեզ: Դա նրանց չի հաջողվել: Հիմա էլ նույնն է տարուկակվում: Այդ մարդիկ ուղղակի չկարողացան հասկանալ, որ իրենց ջանքերը զուր են»:

«Պետության կառավարումը բիզնեսի կառավարում չէ, որտեղ հնարավոր է գործադիր տնօրենի նշանակում, իսկ սեփականության իրավունքը կարելի է պահել ու ղեկավարել», իր Ռոչարյանի կողմից երկիրը դեռեւս կառավարելու մասին հարցին այսպես արձագանքեց նախագահը, ավելացնելով, որ որոշումներ կայացնելիս խորհրդակցում է ինչպես Ռոչարյանի, այնպես էլ կոալիցիոն գործընկերների, մասնագետների հետ:

Ռուսաստան, Իրան, Վրաստան, ԱՄՆ...

«Մենք իրավունք չունենք մեր դաշնակիցներից, մեր բարեկամներից պահանջելու փոխցնել հարաբերությունները այն երկրների հետ, ում հետ մենք բարեկամական հարաբերությունների մեջ չենք», խոսելով Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների ֆոնին Հայաստանի դիրքորոշման մասին՝ նշեց Սարգսյանը, կարեւորելով, որ ռուս-ադրբեջանական հարաբերությունները չբարելավվեն հայ-ռուսական հարաբերությունների հաշվին: Ըստ Սարգսյանի, այս համատեքստում մենք բանակցություններ անողները երկու բան են մոռանում, նախ, որեւէ երկրի նախագահ չի կարող չճանաչել պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը այնպես, ինչպես չի կարող չճանաչել ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ընդ որում, պրոպագանդվող նույն այդ ձեւակերպումներն առաջին անգամ ռուս-ադրբեջանական փաստաթղթում տեղ են գտել դեռեւս 1997-ին:

Հայաստանի արտաքին քաղաքականության աշխուժացման, նաեւ Իրան-Իսրայել-ԱՄՆ համատեքստում միջնորդի դերով հանդես գալու առնչությամբ Սարգսյանը նախ

Հայ-թուրքական դիվանագիտական շփումները երբեք չեն դադարել, ժնեյան հանդիպումն էլ իրականություն է

նը կարեւորեց ոչ թե ժամկետը, այլ հայկական եւ թուրքական հասարակություններում նշմարվող միտումները՝ ճնշակելու առկա խնդիրները: «Չնայած որոշ թուրք քաղաքական գործիչների եւ պաշտոնյաների հայտարարություններին, թե հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն Հայաստանին, ես այդպես չեմ կարծում: Բարելավումը փոխշահավետ կլինի»: Որքերս Ռոչարյանի հայտարարության վերաբերյալ, թե իր ղեկավարելու դեպքում Թուրքիայի նախագահը հրավեր չէր ստանա, եւ արդյոք կան հակասություններ իր եւ Ռոչարյանի միջեւ, Սերժ Սարգսյանը պատասխանեց. «Կարծում եմ, Ռոչարյանի հայտարարությունը որեւէ հնարավորություն չի պարունակում, ուղղակի նախագահ Ռոչարյանն իր անհամաձայնությունն է հայտնել իմ կոնկրետ հայի նկատմամբ: Նախկինում էլ բոլոր հարցերում չէ, որ մենք միակարծիք ենք եղել եւ ես նախընտրել եմ իմ կարծիքը հայտնել ոչ հրապարակով: Ես հարգում եմ նրա՝ հրապարակով իր կարծիքը հայտնելու որոշումը: Ինչ վերաբերում է խոր հակասություններին, շատ երկար տարիներ բազմաթիվ մարդիկ փորձել են հակասություններ, տարաձայնություններ գտնել իմ եւ Ռոչարյանի միջեւ: Ընդ որում, այդ մարդիկ եղել են ոչ միայն ընդդիմության ներկայացուցիչներ, այլեւ մարդիկ, որ գտնվել են իշխանության մեջ, բայց բավարարված չեն եղել իրենց դիրքով, միգուցե ոմանք ինձ համարել են իրենց հակառակորդ, մեսաթես փորձել են բաժանել, գժտեցնել մեզ: Դա նրանց չի հաջողվել: Հիմա էլ նույնն է տարուկակվում: Այդ մարդիկ ուղղակի չկարողացան հասկանալ, որ իրենց ջանքերը զուր են»:

«Պետության կառավարումը բիզնեսի կառավարում չէ, որտեղ հնարավոր է գործադիր տնօրենի նշանակում, իսկ սեփականության իրավունքը կարելի է պահել ու ղեկավարել», իր Ռոչարյանի կողմից երկիրը դեռեւս կառավարելու մասին հարցին այսպես արձագանքեց նախագահը, ավելացնելով, որ որոշումներ կայացնելիս խորհրդակցում է ինչպես Ռոչարյանի, այնպես էլ կոալիցիոն գործընկերների, մասնագետների հետ:

Ռուսաստան, Իրան, Վրաստան, ԱՄՆ...

«Մենք իրավունք չունենք մեր դաշնակիցներից, մեր բարեկամներից պահանջելու փոխցնել հարաբերությունները այն երկրների հետ, ում հետ մենք բարեկամական հարաբերությունների մեջ չենք», խոսելով Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների ֆոնին Հայաստանի դիրքորոշման մասին՝ նշեց Սարգսյանը, կարեւորելով, որ ռուս-ադրբեջանական հարաբերությունները չբարելավվեն հայ-ռուսական հարաբերությունների հաշվին: Ըստ Սարգսյանի, այս համատեքստում մենք բանակցություններ անողները երկու բան են մոռանում, նախ, որեւէ երկրի նախագահ չի կարող չճանաչել պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը այնպես, ինչպես չի կարող չճանաչել ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ընդ որում, պրոպագանդվող նույն այդ ձեւակերպումներն առաջին անգամ ռուս-ադրբեջանական փաստաթղթում տեղ են գտել դեռեւս 1997-ին:

Հայաստանի արտաքին քաղաքականության աշխուժացման, նաեւ Իրան-Իսրայել-ԱՄՆ համատեքստում միջնորդի դերով հանդես գալու առնչությամբ Սարգսյանը նախ

ՀՀ հարց եւ... ոչ միայն

«Ես Լեռնային Ղարաբաղի խնդրում մնում եմ այն դիրքորոշմանը, որին եղել եմ սկսած 94-93 թթ. Որեւէ լուրջ փոփոխություն չի եղել իմ դիրքորոշման մեջ եւ այն ես պահպանելու եմ շատ երկար»: Ադրբեջանի ռազմատեխնիկայի պատասխանն, ըստ Սարգսյանի, այն է, որ խաղի դեռ խաղաղության պայմանագիր չի սեղադրվել, երկրում առնվազն երկու պատճառնյա՝ նախագահն ու պատերազմի նախարարը պետք է համարեն, որ հենց վաղը կարող է պատերազմ սկսվել եւ ջանքեր գործադրել: «Մեր ամենից հզոր փաստարկը մեր բանակն է, մեր զինված ուժերը. եւ մենք ջանք չենք խնայելու, որ զինված ուժերը լինեն մարտունակ: Ես մեկ անգամ եմ հանդիպել նախագահ Ալիեւի հետ, եւ իմ տպավորությամբ խնդրի խաղաղ լուծման միջոցները չեն սպառվել»: Ադրբեջանի կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքից բողոքելու առնչությամբ էլ Սերժ Սարգսյանը նշեց. «Եթե ադրբեջանցիները բողոքում են Մինսկի խմբի աշխատանքներից, ապա հայկական կողմը կարող է հանգիստ լինել»:

Մարտյան իրադարձություններ, երկխոսություն...

Մարտյան իրադարձություններից հետո ձերբակալվածներին ու կալանավորվածներին ազատ արձակելու առնչությամբ Սարգսյանը ընդգծեց, որ ինտենսիվ զբաղվում է այդ

Ադամանդագործության ոլորտում հայ-ռուսական համագործակցության խորացման նպատակով

Ինչպես տեղեկացանք էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի բաժնից, էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը հուլիսի 20-ին երկօրյա աշխատանքային այցով մեկնել է Մոսկվա:

Հուլիսի 21-22-ին նախատեսված են Ներսես Երիցյանի հանդիպումները ՌԴ տրանսպորտի նախարար, հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Իգոր Լեւիտինի, ֆինանսների նախարար Ալեքսեյ Կուդրինի եւ «Ալրոսա» ընկերության ղեկավար կազմի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվելու են բնական ալմաստների մշակման ոլորտում Հայաստանի եւ Ռուսաստանի համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Ներսես Երիցյանին ուղեկցում են ՀՀ ԱԺ պատգամավոր, «Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի» նախագահ Գագիկ Աբրահամյանը եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության առեւտրային քաղաքականության եւ ներքին շուկայի կարգավորման վարչության պետ Գագիկ Ջոչարյանը:

Ա. Մ.

Մասնակցային սկզբունքով ու անմասնակից «Ժառանգություն»

«Ժառանգություն» կուսակցության վարչության նախագահ Անահիտ Բախչյանի հանդիպումը լրագրողների հետ «Հայաց» ակումբում երեկ անհնարին էր դարձել, եւ ներկայացավ փոխնախագահ Մովսես Արիստակեսյանը: Նա անդրադարձավ կուսակցության ծրագրերի ու կանոնադրության փոփոխություններին, որոնք թելադրված են 2000-ից հետո երկրի ու հասարակության կյանքում տեղի ունեցած փոփոխություններով: Արիստակեսյանի բացատրությամբ՝ ծրագիրն այսուհետեւ ուղղված է մարդու եւ քաղաքացու իրավունքների առաջնությանը:

Ինչ մնում է Հանձնաժողովական շարժմանն ու Համազգային կոնգրեսին միանալու «Ժառանգության» հանձնայնել-չհանձնայնելուն, ապա որոշումն այդ կուսակցությունը կկայացնի հուլիսի 24-ին՝ կոնգրեսին միանալու նամակում նշված վերջնաժամկետից մեկ օր առաջ: Միանալու համար «Ժառանգությունը» խիստ կարեւորում է որոշումներ ընդունելու այդ կառույցի մեխանիզմներն ու իմքնուրույնության դրսեւորման առավելագույն հնարավորությունները: Միանալու համար հաջորդ պայմանը ընդդիմության դաշտին՝ «Ներկայնակին» չնույնանալն է: Վերջնական որոշումն անհայտ է, սակայն ամենայն հավանականությամբ մերժումն ավելի մոտ է իրականությանը, չնայած «Ժառանգությունն» ամերիկա մոտեցում ունի՝ պետականաշինության հարցում մասնակցային դիրքորոշմամբ եւ գործելակերպով հանդես գալ:

Մասնակցային գործընթացն, ըստ կուսակցության վարչության փոխնախագահի, ամենեւին էլ չի նշանակում մարտի մեկի իրադարձությունների պարզաբանումները փնտրող ԱԺ հանձնաժողովում ներկայություն ունենալ, այն ունի այլ դրսեւորումներ եւ՝ առաջնահերթ բարեփոխումների ամփոփ ծրագիր, որը կուսակցությունն արդեն մշակել է: Իսկ հանձնաժողովում ներկայացուցիչ ունենալու պայմանները ընդդիմություն-իշխանություն հավասարաչափ ներկայությունն է, Մյասնիկ Մալխասյանին եւ Սասուն Միհայելյանին հանձնաժողովում ընդգրկելը: Սակայն «Ժառանգությունը» չմիանալը համարում է ճկունության դրսեւորում եւ հեռու գնացող անակնկալներ մատուցելու հիմք, որոնք, Մովսես Արիստակեսյանի կարծիքով, միտ էլ առկա են եղել կուսակցության գործելակերպում:

Ինչ վերաբերում է Արաքիր համայնքում «Ժառանգության» ներկայացուցչի՝ Զոյա Թադեւոսյանի թաղամասի ընտրություններում հաղթանակի հավանականությանը, ապա կուսակցության վարչության փոխնախագահը կասկածից վեր է համարում իմանալով եւ թեկնածուի անհատական արժանիքները, եւ «Արաքիր»-«Ժառանգություն» փոխադարձ վստահությունը. «Խորհրդարանական ընտրություններում կոդոդված հաղթանակ ունեցած «Ժառանգությունը» Արաքիրում հաղթեց, որպիսեռ արբակիրցիները հավատում են մեզ»:

ՆԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հելիոհամակարգերը հետաքրքրություն են առաջացնում

Մեծ հետաքրքրությամբ կարդացի «Ազգ» օրաթերթում տպագրված հոդվածը Հանգաստյանի անհատական հելիոհամակարգերի մասին: Աշխատանքը հրատարակ է հանրաշահային մասնաբաժնով եւ հասկանալի կարեւոր է Հայաստանի արդյունաբերության զարգացման համար: Հելիոտեխնիկան շատ կարեւոր դեր կարող է ունենալ նաեւ կիրառական ֆոտոֆիզիայի զարգացման եւ գիտատանտեսությանը նոր տեխնոլոգիաներ տալու գործում:

Հետաքրքրական կլինի մեր կառավարության եւ համապատասխան նախարարությունների կարծիքն այդ գործի նկատմամբ: Ինչո՞ւ շատ կարեւոր աշխատանքները մեր երկրում անուշադրության են մատնվում: Հայտնի է, որ խեղդվելուց փրկվելը հենց խեղդվողի գործն է, ժամանակն է, որ մեզ մոտ հարգեն մեր սեփական գիտնականների հայրենանվեր աշխատանքը եւ օգուտներ հաղթեն ի նպաստ մեր ժողովրդի:

ՎԱՀՐԱՄ ՎԵՐՄԻՇՅԱՆ

Քիմիական գիտությունների դոկտոր, Երեւանի Ս. Լ. Մելքոնյանի անվան նորք օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մասին

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 582663
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՀԱՅԿ ԱՐԵՏՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ / հեռ. 529221

Հասցեատիրոջ (գրասենյակ) / հեռ. 582960

Լուսագրների սենյակ / հեռ. 581841

Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահաղորդումների ծառայություն / հեռ. 529353

Հանձնարարական տարածքը «Ազգ» թերթի

Թերթի նիստերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում են հանձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի

Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում

Գ. ստորագրյալ հոդվածները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
HAVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Մեսալուրգի եւ հանխափորի օրը նշվեց Ալավերդիում, Ախթալայում եւ Շամլուղում

2008-ին ՀՀ կառավարությունը, իր արձանագրային որոշմամբ, ամեն տարվա հուլիս ամսվա երրորդ կիրակին համարեց մեսալուրգի եւ հանխափորի օր: Հուլիսի 20-ին Ալավերդի խորհրդանշական տոնախմբությունների նվիրվեց այդ տոնը, կազմակերպմամբ CPS ընկերության նախագահ Վալերի Մեջլումյանի: Նույն տոնը նշվեց նաեւ Ախթալա քաղաքում, կազմակերպմամբ ԼՀԿ-ի տնօրենության: Ախթալայում եւ Շամլուղում հանձնարարությունն ունի 245-ամյա պատմություն եւ որը տարին հանխափորների խաղաքի ամեն մի օրն ու ամեն մի միջոցառում աղերս ունի այս տարածքում գործունեության 245-ամյակի հետ:

Ախթալայի մշակույթի պալատում կայացավ հանդիսավոր նիստ, որի բացման պատիվը վերապահվեց Ախթալայի ԼՀԿ-ի գործադիր տնօրեն **Սերոբ Տեր-Պողոսյանին**: Նա նշեց, որ իր եւ իր ընտանիքի համար մեծ պատիվ է նշել հանքագործների տոնը, քանի որ այդ մարդկանց ամուր ձեռքերի վրա է պահվում թե՛ կոմբինատի, թե՛ քաղաքի առաջան: Այսօր հիմնական ուշադրությունը պետք է դարձվի մարզերի զարգացմանը եւ Ախթալայի ԼՀԿ-ն ամեն ինչ անելու է, որպեսզի նաեւ երկու քաղաքների բնակչության սոցիալական խնդիրների լուծումը հնարավորինս արագանա:

Ախթալայի ԼՀԿ-ի խանձեկ հանխափորներ ու մեքենավարներ պարգեւատրվեցին թանկարժեք նվերներով՝ հեռուստացույցներով: Տոնական միջոցառմանը նախորդել էին նաեւ սոցիալական միջոցառումներ՝ ճարտու, բազկամարտ, շախմատ եւ ֆուտբոլի մրցումներ: Հաղթողները պարգեւատրվեցին նվերներով եւ դրամական պարգեւներով: Այդ օրը տեղի ունեցավ նաեւ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի վետերանների եւ Ախթալայի վետերանների ընկերական հանդիպումը:

Օրը լի էր նաեւ այլ անակնկալներով

Անակնկալ 1. Թերեւս պատահականորեն, բայց այնպես էր սացվել, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Մեսալուրգի եւ հանխափորի օրը համընկել էր Սերոբ Տեր-Պողոսյանի ծննդյան տարեդարձի հետ: Եվ հանխափորները, որոնց շնորհավորում ու պարգեւատրում էին հանդիսավոր նիստի ղեկավարները, հիմա էլ իրենք էին շնորհավորում իրենց գործադիր տնօրենին:

Անակնկալ 2. Հանդիսավոր նիստի ընթացքում Սերոբ Տեր-Պողոսյանը հայտարարեց, որ ինքը նույնպես միանում է Համահայկական երիտասարդական «Բազե» միջոցառման ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ աշխարհասփյուռ հայության գործարար ներկայացուցիչներին հրած կոչին եւ պատրաստակամ է մի հանի տարվա ընթացքում Լոռու մարզում ներդնելու տուրք 50 մլն դոլար: Նա նաեւ հնարավոր համարեց իր գործընկերների մասնակցությունը այս նախաձեռնությանը, եւ այդ դեպքում ներդրման գումարի չափը կարող է եռապատկվել:

Անակնկալ 3. Ախթալա եւ Շամլուղ համայնքների լիարժեք գոյատեւումը կախված է միայն Ախթալայի ԼՀԿ-ի աշխատանքից, զաղտնի է: Սակայն այդ օրը հայտարարվեց կոմբինատի սեփականատերերի նոր խաղախանության սկիզբը: Հայտարարվեց, որ Ախթալայի ԼՀԿ-ի համար միեւնույն կարեւորությունն ունեն թե՛ կոմբինատում աշխատող բանվորների խնդիրները, թե՛ Ախթալա եւ Շամլուղ համայնքների բնակիչների խնդիրները, այդ թվում նաեւ՝ սոցիալական: Այս նոր խաղախանության հիմնական սկզբունքները ներկայացրեց գործադիր տնօրենը, այն է՝

- մարզերի բնակիչների կյանքի պայմանները պետք է չգիջեն մայրաքաղաքին,
- համայնք ձեռավորող եւ պահպանող ձեռնարկության համար պետք է կարեւորվեն ոչ միայն իր աշխատողների, այլեւ ողջ բնակչության սոցիալական խնդիրները,
- մարզերի երեխաները պետք է ունենան կրթվելու, հանգստանալու եւ սպորտով զբաղվելու, ինչպես նաեւ հեռագայում բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու նույն հնարավորությունները, ինչ որ մայրաքաղաքի երեխաները,
- մարզերի համայնքների բնակիչները եւս պետք է հնարավորություն ունենան առնչվելու արվեստին եւ մշակույթին:

Ախթալայի ԼՀԿ-ի տնօրենությունը եւ անձամբ Սերոբ Տեր-Պողոսյանը հավատարիմ են մնալու վերոհիշյալ սկզբունքներին եւ, ի վերջո, Հայաստանում եւս բիզնեսը պետք է ունենա մարդկային դեմք եւ սոցիալական ուղղվածություն: Սա է այն ճանապարհը, որը տանում է հասարակության համախմբմանը եւ այդ գործում մեծ է բիզնեսի դերը:

Անակնկալ 4. Սրամյանց ընտանիքի դղյակը, որը խորհրդային տարիներին ծառայել է որպես առողջարան, զինվորական հոսպիտալ եւ ախթալեցիների համար հասանելի է պատմամշակութային արժեք, Սերոբ Տեր-Պողոսյանը կվերականգնի անբողջովին՝ ի հիշատակ իր ծնողների: Երբեմնի հանրահայտ Ախթալայի ճոպանուղին այսօր անմխիթար վիճակում է: Ախթալայի ԼՀԿ-ի հովանավորությամբ ներկայումս վրաց մասնագետներն ուսումնասիրում են վերականգնման հնարավորությունը, եւ երկու տարի հետո այն կսկսի գործել: Այս մասին եւս տեղեկացվեց Ախթալայի հասարակությանը: Համապատասխան հեռագիր հղվեց նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահին:

ՄԻՆՎԵՆԵ ՄԻԿՈՅԵՆ

Հայաստանի տնտեսական աճը՝ 10,3 տոկոս

Արտահանման ծավալները, սակայն նվազել են

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության օպերատիվ տվյալների, այս տարվա հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 10,3 տոկոս: Այսինքն, աճը դարձյալ դարձել է երկնիշ, ինչը չէր արձանագրվել այս տարվա փետրվարից:

Շարունակվում է բարձր աճն արձանագրել շինարարությունը՝ 14 տոկոս: Այս անգամ ծառայությունների ոլորտն առաջ է անցել շինարարությունից եւ գրանցել 16,2 տոկոս աճ: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը փոքր անկում է արձանագրել՝ 0,2 տոկոսով: Թեեւ հունիս ամսին այստեղ մայիսի նկատմամբ արձանագրվել է 8 տոկոս աճ: Առանց էներգետիկայի արդյունաբերության, անկումը կազմել է 1,1 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 2 տոկոսով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը հունվար-հունիսին աճել է 8,1 տոկոսով: Փաստորեն, նախորդ ամսվա նկատմամբ հունիսին ամենամեծ աճն արձանագրվել է այս ոլորտում, ինչը, թերեւս, պայմանավորված է եղել այս տարվա առաջ բերքով: Մանրածախ առեւտրաշրջանառության աճը կազմել է 5 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2008-ի հունվար-հունիսին ավելացել է 28,9 տոկոսով եւ կազմել 2 մլրդ 428 մլն դոլար: Արտահանման ծավալները վերջին տարիների ընթացքում, առաջին անգամը լինելով, նվազել են 0,8 տոկոսով եւ կազմել 520,7 մլն դոլար, ինչը ամենամտահոգիչ ցուցանիշը պետք է լինի կառավարության համար: Ներմուծումը կազմել է 1 մլրդ 907 մլն դոլար, աճելով 40,3 տոկոսով: Բացասական հաշվեկշիռը կազմել է 1 մլրդ 487 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում մարտին կազմել է մոտ 87 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 106 հազար դրամ, բյուջետայինում՝ մոտ 61 հազար դրամ: Աշխատավարձերի միջին աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 20,7 տոկոս:

ԱԲՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինչպես են նոր բաժանորդները միանալու էլեկտրական ցանցին

Փետրվարի 1-ից սկսել է գործել նոր կարգ՝ նոր սակագներով

Այս տարվա փետրվարի 1-ից էլեկտրական ցանցին նոր սպառողների միանալու համար գործում են նոր սակագներ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2007-ի դեկտեմբերի 21-ին ընդունեց «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգի էլեկտրական ցանցի միացնելու վճարների կարգը»: Կարգի մանրամասներին ծանոթանալու համար դիմեցինք «Հայաստանի էլեկտրական ցանցերի» (ՀԷՑ) տեխնիկական գծով տնօրեն Կարեն Դարբինյանին

Ըստ նոր կարգի, ցանցին միանալու համար սահմանվել են նոր սակագներ: Ներկայացնելով նոր սպառողների՝ էլեկտրական ցանցին միանալու կարգը, մեր զրուցակիցը նախ նշեց, որ այն ընդունվել է ոլորտը հիմնովին կարգավորելու համար:

Նախկինում տեխնիկական պայմանների տրամադրումից հետո սպառողներն իրենց միջոցներով էին կառուցում օդային եւ մալուխային գծերը, ենթակայանները, տեղադրում տրանսֆորմատորները, ինչը հաճախ իրականացվում էր չլիցենզավորված կազմակերպությունների միջոցով, եւ չէին պահպանվում տեխնիկական անվտանգության կանոնները, նորմատիվ պահանջները: Ըստ Կարեն Դարբինյանի, այսօր առկա սակագներն իրոք տարբերվում են նախկիններից: Նախ՝ սակագները տարանջատված են ըստ լարման մակարդակների, սպառողների դասերի՝ բնակիչ բաժանորդ եւ հանրային բաժանորդ, եւ տարբերակված են ըստ գոտիների՝ Երեւան քաղաք եւ հանրապետության մարզեր:

Մեր է նոր կարգի տարբերությունը նախկիններից: Նախկիններում-ցանցին միանալու ցանկություն ունեցող նոր սպառողները, դիմելով ընկերությանը, ստանում էին միայն տեխնիկական պայմաններ եւ դրա համար վճարում 5000 դրամ: Այսօր, օրինակ, միաֆազ հոսանք անցկացնելու համար բնակիչ բաժանորդը Երեւանի քաղաքում կվճարի 65 հազար դրամ, իսկ Երեւանից դուրս՝ 53 հազար դրամ: Նոր կարգով, սակայն, նախատեսված սակագների դիմաց բաժանորդին առաջարկվում են նոր ծառայություններ, դրանք իրականացնելու համար անհրաժեշտ են հավելյալ ծախսեր, որոնք կիրականացնի «Հայաստանի էլեկտրական ցանցերը»:



«Բացի այն, որ նոր բաժանորդի համար մեր ենթակայանից մինչեւ նրա բնակարանի, տան մուտքն ընկերությունն է անցկացնելու մալուխագծերը եւ կառուցելու անհրաժեշտ այլ պարագաները, նոր սակագների դեպքում բնակիչը վճարում է իրականացվող աշխատանքների՝ կառուցվող գծի նախագծային-նախահաշվային արժեքի ընդամենը 30-40 տոկոսը, մնացած գումարը ներդնում է ՀԷՑ ընկերությունը, եւ բնակիչը այդ գումարը փոխհատուցում է էլեկտրաէներգիա սպառելով 40 տարում, իսկ իրավաբանական անձինք, այսինքն հանրային բաժանորդները՝ 10 տարում, այդ ներդրումները էլեկտրաէներգիայի սակագնի մեջ ներառելու դեպքում», պարզաբանեց Կարեն Դարբինյանը: Ըստ ՀԷՑ-ի տեխնիկական գծով տնօրենի, եղել են դեպքեր, երբ հաստատությունը իրավաբանական անձինք, նախապես չեն հաճախանել այս սակագներին, բայց հետո, հաշվարկներ կատարելով, համոզվել են, որ եթե իրենք անցկացնեն նոր գիծը, դա ավելի թանկ կարժենա:

ՀԷՑ-ի տեխնիկական գծով տնօրենը հատուկ ընդգծեց, որ խոսքը բացառապես նոր բաժանորդի միացման մասին է: Տան անվանափոխության, առուվաճառքի եւ այլ դեպքերում, երբ արդեն իսկ կա բաժանորդ, ոչ մի վճարում նախատեսված չէ: Նորակառույց շենքի դեպքում էլ այդ վճարը կատարում է շինարարական կազմակերպությունը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ այս հարցը երկար քննարկվել է: «Ցնցված ունեցած որոշ տարածայնություններին, մենք կողմ էինք այս համակարգին անցնելուն: Այս կարգի միջոցով ընկերությունը հնարավորություն կունենա վերահսկելու կատարվող աշխատանքները, որպեսզի դրանք համապատասխանեն տեխնիկայի անվտանգության եւ այլ նորմատիվ կանոններին: Իսկ ինչ վերաբերում է մեր տարածայնություններին հանձնաժողովի հետ, արդա դրանք վերաբերում էին խաղաքի կենտրոնին: Այսինքն, մենք կարծում ենք, որ խաղաքի կենտրոնում կառուցվող շինությունների միացման վճարը պիտի զգալիորեն տարբերվեր այլ բնակավայրերում միացման վճարներից: Սակայն հանձնաժողովը գտնեց, որ այդ սակագները լինեն միջինացված տարբերակով», ասաց ՀԷՑ-ի տեխնիկական գծով տնօրենը:

Միաժամանակ, Կարեն Դարբինյանի կարծիքով, նոր կարգի գործելու ընթացքում հնարավոր է փոփոխությունների անհրաժեշտություն: Օրինակ, նման փոփոխություն է կատարվել ժամանակավոր կացարանների նոր բաժանորդներին էլեկտրական ցանցին միացնելու հարցում: Հանձնաժողովն այս հարցը քննարկել է եւ հանգել այն եզրակացության, որ ժամանակավոր կացարաններին թույլ տվի ցանցին միանալ նախկին պայմաններով: Այսինքն, համայնքապետի տեղեկանքի հիման վրա, որ տվյալ անձն ապրում է այս ժամանակավոր կացարանում, տրամադրվելու է միայն տեխնիկական պայման՝ 5 հազար դրամով եւ բաժանորդն ինքն իր միջոցներով անց է կացնելու էլեկտրականությունը, քանի որ հայտնի չէ, թե նոր բաժանորդը որքան է մնալու այդ կացարանում եւ ՀԷՑ-ը չի կարող ներդրումներ կատարել առանց դրանք հետ ստանալու հեռանկարի:

Ա. Ս.

Թշնամա՞նք, թե՞ բարեհաճ վերաբերմունք

Ստորեւ բարգմանաբար ներկայացվող հոդվածը որոնես խմբագրական լույս է տեսել Մ. Նահանգներում անգլերեն լեզվով հրատարակվող «Արմինյո ռիփորթ» շաբաթաթերթի հունիսի 28-ի համարում: Թերթի գլխավոր խմբագիր Վինսենթ Լիման բնակվում է Երեւանում:

Հունիսի 25-ին՝ յորեքշաբթի օրը ԱՄՆ-ի պետքարտուղարի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերով տեղական Դեյվիդ Կրամերը Երեւանի Մ. Նահանգների դեսպանատանը մամուլի ասուլիս տվեց, որի ժամանակ նա միաժամանակ եւ թշնամանք, եւ բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեց հայկական պետության հանդեպ:

Նա իր հարցակումներն սկսեց այն խոսքերով, որ «Միացյալ Նահանգները եւ Հայաստանը շատ լավ, ամուր կապեր ունեն: Մենք բարեկամներ ենք, եւ բարեկամներն իրար հետ անկեղծորեն են խոսում»: Հետո նա անցավ բուն քննարկումներին, որոնք հետու էին բարեկամական կամ հավասարակշռված լինելուց, եւ սկսեց կառավարությանը խորհուրդներ տալ հետեւյալ հարցերում:

Մամուլի եւ հանրահավաքների ազատություն

Փետրվար եւ մարտ ամիսներին Հայաստանի ժողովրդավարական զարգացումներում անկում նկատելով, որն Կրամերը նախ տեսավ, որ Մ. Նահանգները «խստիվ հանձնարարում է, որ (Հայաստանի) կառավարությունը վերականգնի մամուլի եւ հանրահավաքների ազատությունները»: Նա ոչ մի խոսք չասաց, որ այդ ուղղությամբ արդեն քայլեր կատարված են:

Մարտի 1-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, օգտվելով սահմանադրական իրավունքներից, արտակարգ իրավիճակ հայտարարեց երկրում եւ որոշակի սահմանափակումներ դրեց հանրահավաքների եւ մամուլի ազատությունների վրա: Նա մասնակի եւ արագ անբողջապես վերացրեց այդ սահմանափակումները հանրապետությանբար մարտի կեսերին եւ մարտի 20-ին՝ արտակարգ իրավիճակի վերացման օրը: Այսօր, ինչպես նախկինում, ամենատարբեր գաղափարների արտահայտություններ կարելի է լսել եւ կարդալ ինչպես զանգվածային, այնպես էլեկտրոնային լրատվության միջոցներով: Կարելի է նույնիսկ ասել, որ ներկայումս ավելի շատ են հեռուստատեսությամբ հնչող մեմերի տարբերությունները, քան ընտրություններից առաջ:

Հանրահավաքի սահմանափակումների օրենքը ընդունվեց մարտի կեսերին, բայց դրանից հետո փոփոխության ենթարկվեց համահունչ լինելու Եվրոխորհրդի վենետիկյան հանձնաժողովի պահանջներին: Երեւանի հաղորդավարությունը եւ ոստիկանությունը նախ դժվար հասկանալի որոշումներ ընդունեցին կասեցնելու հունիսի 20-ին նախատեսված հակակառավարական երթը, սակայն նշանակված ժամին ոստիկանությունը չմիջամտեց, եւ 15 հազար մարդ խաղաղ ցույց անցկացրին:

Այս դրական առաջընթացը տեսնելու փոխարեն որն Կրամերն, ինչպես ասում են, «դարձյալ տեղափոխեց» մի այլ դաշտ ու սկսեց պահանջել, որ «Ա1+» հեռուստակայանը վերաբացվի: Այս հեռուստակայանը փակվել էր 2002-ին: Հանրային հեռուստակայանը առաջարկել էր «Ա1++»-ի որոշակիորեն ամենակառավարական լուրերն ամեն օր հեռարձակել իր ալիքով, բայց «Ա1+»-ի ղեկավարությունը մերժել էր: Հեռուստատեսային հաճախականությունների որոշակի թվի առկայության եւ զբաղվածության պայմաններում խոսք չի կարող լինել այժմ որեւէ մեկին իր 7-տարվա եթերային իրավունքից զրկելու եւ այդ իրավունքը «Ա1+»-ին տալու վերաբերյալ: Իսկ Մ. Նահանգները այն ձեռնհաս իշխանությունը չէ, որ որոշի, թե ո՞ր գործարար շրջանակներն են լավագույնս որակավորված (կապիտալի, տաղանդի եւ բիզնես ծրագրերի առումներով) շահելու առաջիկա տեղեռային մրցույթում:

Եթե ճիշտ հասարեմք, որ պետքարտուղարության դիվանագետները պետք է հավաս ընծայեն այն մասնագետներին, որոնք իրենց սորադասներն են, ապա պետք է նշեմք, այդուհանդերձ, որ ճիշտ չէ չվստահել կամ զրպարտել Հայաստանի օրենսդիր մարմինների ընտրած մասնագետներին: Դա պարզապես հարգանքի պակաս է նշանակում:

Ինչ վերաբերում է հարցի էությանը, բուն նյութին, մեր խմբագրականները նույնքան մտահոգություններ ու հարցեր են առաջ բերել այդ բնական ենթությունների առնչությամբ: Մինչ հասակ է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իր թիմը իրոք իշխանության գլուխ էին գալիս, տարալելով պետական ներկա վարչակազմը, դեռեւս հասկեցված չէ, որ այդ բանն ուզում էին կատարել զինված ապստամբության միջոցով: Ավելին, այն փաստը, որ դեռեւս ոչ ոք չի պատժվել 10 մահացածների առնչությամբ, մտահոգության առիթ է տալիս:

Օրինականություն

Հայաստանի նոր վարչակազմի հանդեպ Մ. Նահանգների վերաբերմունքի մասին «Ազատություն» եւ «Ազաս Եվրոպա» ռադիոկայանների հարցերին պատասխանելիս որն Կրամերն, ավելի արտաքոց դրսեւորում թույլ տալով իր խոսքերին, ասաց, որ Ռոբերտ Քոչարյանն այլեւս նախագահ չէ եւ ԱՄՆ-ի պաշտոնյաները գործ ունեն նախագահական գրասենյակը զբաղեցնող նոր անձնավորության հետ:

Ակնկալում ենք, որ Մ. Նահանգները կխրախուսի Հայաստանին դառնալու ժողովրդավարական այն երկիրը, որ ինքը՝ Հայաստանն է ցանկանում դառնալ:

Որպես Հայաստանի եւ նրա բնակչության աղագալով մտահոգ անձնավորություններ, կցանկանայինք, որ Ամերիկան շարունակեր ուշադիր հետեւել Հայաստանի ժողովրդավարական զարգացումներին: Դիվանագետները, նրանց թվում նաեւ պետքարտուղարի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերով տեղակալը, պետք է բարձրաձայնեն, եթե խնդիրներ են առաջ գալիս, բայց միաժամանակ, միեւնույն տրամաբանությամբ, նրանք նաեւ պետք է ընդունեն եւ բարձրաձայնեն այն ամեն դրականը, որ տեղի է ունենում: Ավելին, պետք է ընդունեն, որ հասարակության բոլոր տարրերն են պարտավոր դրական, կոնստրուկտիվ դեր խաղալ այդ գործընթացում:

Բուշի վարչակազմն ու պետքարտուղարությունը պարտավոր են վերանայել Հայաստանի հանդեպ իրենց դիրքորոշումը, եթե ոչ իրենց հետիոտնյա կեցվածքը կարող է էլ ավելի աղալայնացնել Հայաստանը եւ խոչընդոտել առաջ շարժվելու նրա ջանքերին:

Քանի մոտենում են ամերիկյան նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները, մենք էլ մեր հերթին պետք է հաջալերենք Մ. Նահանգներին՝ որդեգրելու առավել հավասարակշռված, կոնստրուկտիվ եւ տեղեկացված դիրքորոշում Հայաստանի հանդեպ՝ նպաստելու առաջընթացի նոր ջանքերին:

Թարգմ. Հ. Ս.

ՇՈՒԿԱ

Հունիսին անշարժ գույքի շուկան կրկին աշխուժացավ

Արշանագրվեց առուվաճառքի գործարքների քանակի աճ

Այս տարվա հունիսին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 14437 գործարք, ինչը 9,5 տոկոսով ավելի է մայիսին կատարված գործարքների համեմատ եւ 10,8 տոկոսով ավելի՝ անցած տարվա հունիսի համեմատ: Այս մասին տեղեկացնում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալներից: Հունիսին արձանագրված գործարքների քանակի աճը վկայում է, որ անշարժ գույքի շուկան վերջնականապես հաղթահարել է մարտի 1-ի անկարգությունների եւ արտակարգությունների հետեւանքները, ինչի պատճառով նախորդող երկու-երեք ամիսներին նվազել էր գործարքների եւ հատկապես առուվաճառքի գործարքների քանակը:

Հունիսին գործարքներից 4906-ը մայիսի 4765-ի փոխարեն օտարման գործարքներն են եղել, որոնց մեջ առուվաճառքի գործարքները կազմել են 83,6 տոկոսը, իսկ մնացածը նվիրատվություններն ու փոխանակությունները են եղել: Օտարման գործարքների գրեթե 33,3 տոկոսն արձանագրվել է Երեւանում: Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 59,3 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: Այստեղ էր նախորդ՝ մայիս ամսին արձանագրվել ամենամեծ պասսիվացումը, որը 2007-ի մայիսի ցուցանիշին զիջում էր 21,2 տոկոսով, իսկ այս տարվա ապրիլի ցուցանիշին՝ 2,8 տոկոսով: Հունիսին, սակայն, մայիսի համեմատ բնակարանների առուվաճառքը Երեւանում աճել է 11,1 տոկոսով, այդուհանդերձ, նախորդ տարվա հունիսի համեմատ նվազել 16,9 տոկոսով:

Բնակարանների գները հունիսին մայիսի համեմատ աճել են 1,5 տոկոսով: Ըստ համայնքների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները հունիսին այսպիսին են եղել.

Համայնքներ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2007 թ.	հունիս 2008 թ.	մայիս 2008 թ.
Կենտրոն	454800	487000	477400
Արաբկիր	372500	418500	416300
Քանաքեռ-Զեյթուն	273000	309600	307300
Նոր Նորք	228700	281700	276200
Ավան	217000	274000	268300
Էրեբունի	221700	279500	274000
Շենգավիթ	244000	285000	279300
Դավթաշեն	246200	295000	290200
Աջափնյակ	237000	280800	280300
Մալաթիա-Սեբաստիա	226700	269700	266000
Նուբարաշեն	124900	155300	151500
Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից)	258800	303300	298800

Մարզերում, բացառությամբ Երեւանի, բնակարանների միջին գները հունիսին աճել են 2,6 տոկոսով: Երեւանից հետո ամենաթանկ բնակարաններն Աբովյանում են, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 175 հազար դրամ, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 166 հազար դրամ, Ծաղկաձորում՝ 150 հազար դրամ: Այդ գալիս են Աշտարակը, 1 քմ-ն՝ 133 հազար դրամ, Մասիսը՝ 131 հազար դրամ, Նոր Հաճնը՝ 126 հազար դրամ, Ջերմուկը՝ 124 հազար դրամ:

Հայաստանում հունիսին գրանցվել է անհատական տների առուվաճառքի 542 գործարք, որից 102-ը Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքները մայիսի համեմատ նվազել են 12,8 տոկոսով, իսկ անցած տարվա հունիսի համեմատ աճել 11,1 տոկոսով: Միջին գներն այստեղ, հունիսին, նախորդ ամսվա համեմատ, աճել են 1,2 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ տարածության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների միջին 1 քմ-ի միջին գներն ըստ համայնքների, հունիսին եղել են.

Համայնքներ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2007 թ.	հունիս 2008 թ.	մայիս 2008 թ.
Կենտրոն	468900	494400	491300
Արաբկիր	376500	426900	420700
Քանաքեռ Զեյթուն	275200	316800	315000
Նորք-Մարաշ	233000	288900	283400
Ավան	219800	276100	274500
Էրեբունի	225300	281600	276600
Շենգավիթ	245200	287200	282200
Դավթաշեն	250800	301200	295400
Աջափնյակ	241700	289000	286000
Մալաթիա Սեբաստիա	228900	275900	273500
Նուբարաշեն	127400	159900	158300
Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից)	263000	308900	305200

Մարզերում միջինացված են 200 քմ տարածության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գներն ավելացել են 2,8 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Ծաղկաձորում են, 1 քմ-ն՝ 237 հազար դրամ, որտեղ պահպանվում է գների ամենաարագ աճի տեմպը: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 184 հազար դրամ: Երրորդը Վաղարշապատն է՝ 1 քմ-ն 172 հազար դրամ, այնուհետեւ Աշտարակը՝ 135 հազար դրամ, Մասիսը՝ 134 հազար դրամ, Նոր Հաճնը՝ 131 հազար դրամ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ նախորդ ամսվա ցուցանիշների վերլուծության արդյունքները ներկայացնելիս արտահայտված հույսը, որ ամռան ամիսներին անշարժ գույքի շուկան կրկին կաշխուժանա, կարծես թե իրականանում է, հավանաբար այդ միտումը կշարունակվի նաեւ հուլիս եւ օգոստոս ամիսներին:

ԱԲՈՎ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տարաբնույթ մեկնաբանություններ ՀՀ նախագահի հրավերի առնչությամբ

Լյութենն ու Սոյսալը հորդորում են Գյուլին գնալ Երևան, իսկ Իլթեր Թուրմենը նախազգուշացնում է, որ չգնա

Հունիսի 23-ին Մոսկվայում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ելույթում ասել էր. «Առաջիկայում ես մտադիր եմ նոր քայլեր ձեռնարկել հայ-թուրքական հարաբերությունները խթանելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ, ես կհրավիրեմ Թուրքիայի նախագահ Գյուլին Երևան՝ միասին դիտելու Հայաստանի եւ Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը»:

Նրա խոսքերը լայն արձագանք էին գտել ինչպես հայկական եւ համաբխարհային, այնպես էլ թուրքական մամուլում: Արձագանքները դեռեւս շարունակվում են: **«Ազգը»** բազմիցս անդրադարձել էր Սերժ Սարգսյանի հրավերի թուրքական արձագանքներին: Հունիսի 18-ին «Անատոլու» գործակալության միջոցով հրավերին է անդրադառնում թուրքական NTV-ն, ընդ որում Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, պատասխանող դեսպան **Օմեր Էնգին Լյութեմի**, Թուրք-հայ գործարար միության համանախագահ **Քաան Սոյսալի** եւ նախկին արտգործնախարար **Իլթեր Թուրմենի** մեկնաբանություններով:

Ըստ թուրքական NTV-ի, «Անատոլու» գործակալության հարցին պատասխանելիս Լյութեմն ասել է. «Սերժ Սարգսյանը մեկ քառով երկու թռչուն է խփում: Եթե հրավերը հաջողությամբ պսակվի, նա երկրի ներսում կթուլացնի լարվածությունը: Անհաջողության դեպքում էլ այսպիսի նախաձեռնություն ցուցաբերելու համար հեղինակություն ձեռք կբերի: Ֆուտբոլային հանդիպման հրավերի ընդունումը Թուրքիայի տեսանկյունից զուտ խորհրդանշական է լինելու եւ բարի կամքի դրսեւորում: Չեմ կարծում, որ թուրք հասարակությունը վաս ընդունի ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար Գյուլի Երեւան գնալը: Մինչդեռ հայ հասարակությունն այս հարցում մասնատվել է: Հասարակության ճնշող մասը դրական է մոտենում հրավերին: Սակայն դաշնակներն ու ծայրահեղ ազգայնականները դեմ են Գյուլի այցին, հայտարարեցին, որ այցն իրականացնելու դեպքում բողոքի ցույցեր են կազմակերպելու»:

Լյութենը զգուշացրել է Հայաստանում Թուրքիայի եւ թուրքական դաշտվիրակության դեմ որոշ ցույցերի հավանականության մասին եւ ասել է, որ դեռ ժամանակ կա որոշելու, արդյոք եւ շարունակել. «Հրավերի ընդունման դեպքում Թուրքիան աշխարհում համակրանք կգտնի: Նրան կողջունեն տարբեր երկրներ»: Նա միաժամանակ կարծիք է հայտնել, թե Սերժ Սարգսյանը հրավերի առաջարկն արել է «Մոսկվայի հետ խորհրդակցելուց հետո», եւ ավելացրել. «Սա ցույց է տալիս, որ Ռուսաստանն առանց բարձրաձայնելու հակված է Թուրքիայի եւ Հայաստանի տարաձայնությունների շուտափույթ հաղթահարմանը»:

Վերջում Լյութենը եզրակացրել է. «Հայաստանի հետ հաշտվելը չի նշանակում հաշտվել նաեւ սփյուռքի հետ: Եթե համաձայնության գալու լինենք, սփյուռքը դեռ երկար ժամանակ համառորեն շարունակելու է այն սեւ քարոզությունը, որը Թուրքիայի դեմ է ծավալում»:

Թուրք-հայ գործարար միության համանախագահ Քաան Սոյսալը ՀՀ նախագահի հրավերը որակել է «շատ հաճելի եւ անկեղծ», նշել է, որ նախագահական ընտրություններում տարած հաղթանակի առնչությամբ ինքը միության անունից շնորհավորել է Սերժ Սարգսյանին, ապա եւ շարունակել. «Նախագահ Գյուլն անդայման պետք է գնա Հայաստան»: Սոյսալը միաժամանակ հույս է հայտնել, որ Գյուլը հրավերին դրականորեն կարձագանքի եւ պատասխան հանդիպմանը ինքն էլ Սերժ Սարգսյանին կհրավիրի Թուրքիա:

Ինչ վերաբերում է նախկին արտգործնախարար Իլթեր Թուրմենին, ապա նա նշել է. «Չեմ կարծում, թե նախագահ Գյուլը կգնա Հայաստան: Հրավերի անկեղծության կամ երկու երկրների հարաբերություններին հնարավոր նպաստի մասին որեւէ կարծիք չունեմ: Հայտնի չէ, թե հրավերի ընդունումն ինչ նպաստ կբերի երկու երկրների միջեւ առկա հարցերի կարգավորմանը, քանի որ մենք այդ երկրի հետ չունենք դիվանագիտական հարաբերություններ, իսկ մեր սահմանները փակ են»:

Իլթեր Թուրմենը հիշեցրել է, որ Աբդուլլահ Գյուլն ու Սերժ Սարգսյանը տարբեր ոլորտներում արդեն հանդիպում են, հրավերից հրաժարվելը չի նշանակում երկու երկրների հարաբերությունների վատթարացում, իսկ ընդունումը հազիվ թե Թուրքիայի նկատմամբ համակրանք առաջացնի: Վերջում նա ավելացրել է. «Եթե ես լինեի, չէի գնա»: Նա այս հետեւությունը պայմանավորել է «ֆուտբոլային հանդիպման ընթացքում անախորժ միջադեպերի հավանականությամբ»:

ՀԱՅՈՐ ՇԱՔԱԲԵՏԵՆ

Իրանում այցն ավարտելով Օբաման այսօր կմեկնի Իսրայել եւ Պաղեստին

Իսրայելը նախընտրում է Մակենզիին

